ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1564-Ա « 24 » մարտի 2026թ.

ԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.153 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1.5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Աննա Մարգարյանի դիմումը՝

1. Աննա Լևոնի Մարգարյանին՝ 2026 թվականի մարտի 24-ից նշանակել «Երևանի Ռաֆայել Իշխանյանի անվան հ.153 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնում՝ որպես ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև սահմանված կարգով տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

3. «Երևանի Ռաֆայել Իշխանյանի անվան հ.153 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Աստղիկ Ոսկանյանին

ազատել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ